ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28.03.2018թ.
ժամը 12 [30]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,
ՀՀ ՋՈ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնացին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1»** ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին՝ **«Արպանիվ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, **«Հույս-Մոտոր» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված տեխնիկական բնութագրով նշված չեն հրավերում առկա պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված անվադողերի տեխնիկական ցուցանիշները և անվադողերի անվանումները, **«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ներկայացված տեխնիկական բնութագրով նշված չեն հրավերում առկա պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված չափման միավորը և անվադողերի անվանումները:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

05.04.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«Հույս-Մոտոր»** և **«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ**-ների կողմից ներկայացվել են մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, **«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ**-ի ներկայացվածը ընդունվել են գնահատող հանձնաժողովի կողմից, իսկ **«Հույս-Մոտոր» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված շտկված տարբերակում կրկին նշված չէր ապրանքի անվանումը (մոդելը): Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները՝ որոշեց մերժել **«Հույս-Մոտոր» ՍՊԸ**-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել **«Արպանիվ» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1»** ծածկագրով բաց ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

05.04.2018թ

Գնահատող, (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող, Ս. Ստեփանյան

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնահատող Հ. Բարսեղյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ա. Բաղրամյան